

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԵՏԻ ՑՈՒՑՈՒՄ

14 սեպտեմբերի, 2020 № 2

**ԱՀ պետական մարմիններին,
տեղական ինքնակառավարման մարմիններին,
պետական կազմակերպություններին,
պետական մասնակցությամբ ընկերություններին**

Հաշվի առնելով Արցախի Հանրապետության ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի վերսկսումը և նոր կորոնավիրուսային համավարակի գործոնով պայմանավորված ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպման յուրահատկությունները՝ անհրաժեշտ է հնարավոր բոլոր դեպքերում թույլատրել (հարգելի համարել) աշխատանքային օրվա մեջ մինչև 2 ժամ ժամկետով այն աշխատակիցների բացակայությունը, ովքեր ունեն երկհերթ ուսուցմամբ պետական և ոչ պետական ուսումնական հաստատություն(ներ)ում երկրորդ հերթում 1-9-րդ դասարաններում սովորող երեխա(ներ):



Ժիրայր Միրզոյան